ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 19-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի «Ոստիկանության ծառայողների ատեստավորման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N 2147-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 892-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու և հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման գործընթացի կազմակերպչական աշխատանքները սկսել 2023թ. հուլիսի 21-ից:

2. Ատեստավորման մեկնարկի օր սահմանել 2023թ. օգոստոսի 21-ը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կրթահամալիրում՝ յուրաքանչյուր խմբի համար ընդհանուր առմամբ հինգ աշխատանքային օր տևողությամբ յուրաքանչյուր օրվա համար սահմանելով սկիզբ ժամը 9.00-ին՝ ավարտը 18.00-ն:

3. Ատեստավորմանը մասնակցելու համար զեկուցագրերի ընդունման սկիզբ սահմանել հուլիսի 24-ը, ավարտը՝ օգոստոսի 11-ը:

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կադրային քաղաքականության վարչության պետին՝

1) ատեստավորմանը մասնակցելու համար ցանկություն հայտնած ծառայողների նկատմամբ իրականացված թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ ստուգման վերջնական արդյունքները ստանալուց հետո կազմել ատեստավորմանը մասնակցող ծառայողների անվանացուցակը և տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կրթահամալիրի և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների պետերին՝ նշելով վայրը, օրը և ժամը,

2) նախապատրաստել և մինչև 2023 թվականի օգոստոսի 14-ը իմ հաստատմանը ներկայացնել ատեստավորման հանձնաժողովի հրամանի նախագիծը,

3) սահմանել հսկողություն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների ատեստավորման նախապատրաստական ու կազմակերպչական բնույթի աշխատանքների և անցկացման գործընթացի նկատմամբ:

5. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կրթահամալիրի պետին՝

1) նախապատրաստել և մինչև 2023 թվականի օգոստոսի 18-ը իմ հաստատմանը ներկայացնել ստուգարքի անցկացման համար առանձին հանձնաժողովի հրամանի նախագիծ,

2) ապահովել անհրաժեշտ պայմաններ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների ատեստավորման անցկացման համար:

6. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների պետերին՝

1) սույն հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված գրությունը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում իրազեկել անձնակազմին,

2) ատեստավորման անցկացման օրը և դրա նախորդող երկու օրը՝ ծառայողին ազատել ծառայողական պարտականությունների կատարումից՝ ատեստավորմանը մասնակցելու համար:

7. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության պետ-գլխավոր ֆինանսիստին՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կադրային քաղաքականության վարչության կողմից ուղարկված ատեստավորման արձանագրության և գրավոր եզրակացությունների պատճեների հիման վրա իրականացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների հավելավճար հաշվարկելու գործընթացը:

8. Սույն հրամանը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողներին էլեկտրոնային եղանակով կամ գրավոր ծանոթացնելու վերաբերյալ ամփոփաթերթը կցել ստորաբաժանման քարտուղարությունում:

9. Հրամանն իրազեկել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

«20» հուլիսի 2023թ.
քաղ. Երևան